ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ----------

«01» 09 ----------2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

IVբ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Հովսեփյան Ռայա Կոյայի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

IVԲ դասարանը բաղկացած է 35 աշակերտից, որից 20-ը աղջիկ, 15-ը տղա: Դասարանում տիրում է համերաշխ մթնոլորտ: Աշակերտները կարգապահ են, ուշադիր, հետևում են դասարանի մաքրությանը: Հոգատար են միմիյանց նկատմամբ, խնամքով են վերաբերվում դասագրքերին: Ակտիվ են Ղազարյան Ռիման,Դալլաքյան Հայկը, Եղիազարյան Լուիզան, Մակարյան Միքայելը, Մեսրխանի Էլենը:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

Աշակերտների գիտակցության մեջ վառ պահել, որ իրենք հայ առաքելական եկեղեցու հետևորդներ են՝ քրիստոնյաներ: Այդ կապակցությամբ այցելել եկեղեցիներ՝ Սուրբ Հռիփսիմեի եկեղեցի, Մուղնի, Սուրբ Էջմիածին: Իմանալ աղոթել <<Հայր մեր>>-ը: Ընթերցել <<Մանկական Աստվածաշունչը>> և կատարել քննարկումներ, որը կնպաստի երեխաներին զերծ պահել աղանդներից:

Գեղագիտական դաստիարակություն- *Խնդիրները՝* Այնպես անել, որ աշակերտները զգան, հասկանան, գնահատեն գեղեցիկը: Ծանոթանան հայ և արտասահմանցի արվեստագետների ստեղծագործություններին: Երաժշտության, արվեսի գործիչների թանգարաններ այցելելով՝ զարգացնել գեղագիտական հմտություններ, կարողություններ:

Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: Աշակերտներին ոգեշնչել մերօրյա (քառօրյա, 44-օրյա) հայ հերոսների անօրինակ սխրագործություններով: Սովորել ռազմահայրենասիրական երգեր՝ <<Կովկասի քաջեր>>,<< Զորավար Անդրանիկ>>, <<Պատերազմ եք գնում>> և այլն: Ճանաչել երկրի պետական խորհրդանշանները՝ դրոշը, զինանշանը, օրհներգը:

Ֆիզիկական դաստիարակություն *Խնդիրները՝*

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:

Կազմակերպել ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ՝ մրցույթներ, օլիմպիադաներ:

Անընդհատ հետևել աշակերտների կեցվածքին՝ նստելիս, գրելիս, քայլելիս: Դասապրոցեսին կազմակերպել ֆիզկուլտ դադարներ:

Աշխատանքային դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:

ՈՒստարվա ընթացքում հետևել որ աշակերները պահպանեն դասարանի մաքրությունը և դպրոցական գույքը: Ակիվորեն մասնակցեն դպրոցական շաբաթօրյակներին:

Բնապահպանական դաստիարակություն *Խնդիրները՝*

Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում

Յուրաքանչյուր աշակերտ ճանաչի և իմանա հայրենի բնաշխարհի առանձնահատկությունները, որին կնպաստի այցելություն <<Բուսաբանական այգի>>, <<Կենդանաբանական այգի>>: Պահպանի և խնամի բնությունը, չվնասի կենդանիներին, հոգ տանի ձմեռող թռչունների մասին:

Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի ավելի լավ սովորեն:*

Որքան ամուր է դպրոց-ընտանիք կապը, այնքան ճիշտ է դաստիարակվում մեր երկրի ապագա քաղաքացին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	Դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
Հինգշաբթի	6-րդ ժամ		

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	Գիտելիքի օր: Զրույց.՝ <<Անվտանգ երթևեկություն>>:		
II	Համագործակցություն. <<Ինչպես Կոկոն թիմի անդամ դարձավ>>:		
III	<<Գյուղ կանգնի, գերան կկոտրի>>, <<Նավաբեկություն>>:		
IV	Հայաստանի Հանրապետության անկախության տոնը:		
V	Արդյունավետ հաղորդակցում. <<Խուզարկուները>>:		
VI	<<Փոխանցել տարբեր զգացմունքներով>> : Վարժություն:		
VII	Խնդիրների համատեղ լուծում << Քնած գեղեցկուհին>>:		
VIII	<<Ամենալավ տարբերակը>>: Վարժություն		

IX	Կոնֆլիկտների հաղթահարում. << Խուզարկուները>>:		
X	Կոնֆլիկտների հաղթահարում. <<ՈՒրա՞գ, թե՞ սղոց >>:		
XI	Բանակցություններ, միջնորդություն. << Հովանոցը>>:		
XII	Միջնորդություն. << Օդապարուկը>>, << Երրորդն ավելորդ չէ>>:		
XIII	Երեխայի իրավունքները. << Երեխաների իրավունքների պաշտպանը>>:		
XIV	Երեխայի իրավունքները. << Կարող եմ, ուզում եմ, պետք է >>:		
XV	Սեռային խնդիրներ. << Լուսինեի երազը>>:		
XVI	Զրույց.՝ <<Ամանորի հրաշքները>>:		
XVII	Համագործակցություն. <<Տուն ենք կառուցում>>:		
XVIII	Միջնորդություն. <<Ես ել եմ ուզում կախարդել>>:		
XIX	Երեխայի իրավունքները. <<Իրավունքները մեր պաշտպաններն են>>:		
XX	Զրույց.՝<<Հայոց բանակի անհրաժեշտությունը Հայաստանի և հայ ժողովրդի կյանքում>>:		
XXI	Մասնակցություն ակտիվ քաղաքացիական դիրքորոշում. <<Գլոբուսը>>:		
XXII	Մասնակցություն ակտիվ քաղաքացիական դիրքորոշում.<< Մենք չանենք,ո՞վ անի>>:		
XXIII	Զրույց.՝ << Մեծն Թումանյանի անմահ գործերը>>:		
XXIV	Զրույց.՝<< Ճիշտ ընտրված և ընթերցված գիրքը կարող է լուսավորել մարդուն>>:		
XXV	Շրջակա միջավայր. << Եկենք պայմանավորվենք>>:		
XXVI	Զրույց.՝ << Ինչպես մեր սիրելի մայրերին>>, տոնական բացիկների պատրաստում:		
XXVII	Հանդուրժողականություն. << Հնդկացի-հնդկացի խաղանք>>:		
XXVIII	Հանդուրժողականություն. << Կետիկներ>>:		
XXIX	Զրույց.՝<< Ժպիտ պարգևենք քույրերին, մայրերին>>:		
XXX	Հանդուրժողականություն. << Մեր կարողացածի չափով>>:		
XXXI	Զրույց.՝ << Բարեկենդան>>,<<Ծաղկազարդ>>, <<Զատիկ>>:		
XXXII	Զրույց.՝ << Հիշենք և պահպանենք երթևեկության կանոնները>>:		
XXXIII	Միջմշակութային փոխըմբռնում. << Կոկոյի ճամփորդությունը>>:		
XXXIV	Միջմշակութային փոխըմբռնում. << Չէի՞ք ասի>>: Ամառային արձակուրդներին ընդառաջ:		